ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն .....

«.....».....2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

III-ա դասարան

Բաղդասարյան Հասմիկ

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2023-2024 ուստարում 3-րդ դասարանում սովորում է 21 աշակերտ՝ 9 տղա և 12 աղջիկ: Աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Երրորդ դասարանի սաերը համախմբված են և համերաշխ:

2.**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասրանի վարքին և ուսման առաջադիմությանը: Կազմակերպել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների առաջադիմության բարձրացմանը: 2023-2024 ուս տարվա դասղեկի ժամերի թեմաներն ընտրված են սաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Սաների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ: Բացահայտել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ համագործակցելով ՄԿԱ գծով փոխտնօրենի, հոգեբանի , ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի հետ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1Հոգևոր դաստիարակությունը սերտ կապված է բարոյական դաստիարակության հետ: Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր կենտրոններ: Սաները կծանոթանան եկեղեցական տոներին:

3.2**Գեղագիտական դաստիարակություն** Ձևավորել գեղագիտական ճաշակ՝ մշակույթը կրող , ստեղծագործական ակտիվություն ունեցող անձ: Սաների մոտ ձևավորել գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողություններ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ այդ շրջանն ամենանպաստավորն է անձի մոտ հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Ձևավորել խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝ մարմնի կեցվածքի նկատմամբ: Զարգացնել կամային հատկանիշներ, նպատակասլացություն:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Սաների մեջ սերմանել այն գաղափարը, որ միայն աշխատանքի միջոցով կհասնեն հաջողությունների: Արժևորել աշխատանքով ստեղծածը: Սովորեցնել գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Դաստիարակությունը իր արդյունքն է տալիս, եթե ընտանիքի հետ տարվող աշախատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այդ իսկ պատճառով պետք է ամուր պահել դպրոց- ընտանիք կապը:

Դասարանի աշակերտական խորհրդի կազմը

Ավագ՝ Վարդան Գրիգորյան

Անդամներ՝ Աշոտ Մկրտչյան

Նունե Սահակյան

Դասարանի ծնողական խորհրդի կազմը

Նախագահ՝ Անահիտ Վիրաբյան

Անդամներ՝ Սյուզաննա Միրանյան

Լիլիթ Վարդանյան

3-րդ դասարան

Ուսումնադաստիարակչական աշխատանք

Ուրբաթ	Աշխատանքի բովանդակություն	
1	Գիտելիքի օր	1.09.23
2	Մարդկային հարաբերություններ	8.09.23
3	Իմ անկախ հայրենիք	15.09.23
4	Մեր օրյա անմահ հերոսներ	22.09.23
5	Ոստիկանն իմ բարեկամն է	29.09.23
6	Կյանք կյանքի գնով	6.10.23
7	Պահպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը	13.10.23
8	Հայրենիք՝ ապահով մեր տանիք	20.10.23
9	Պահպանենք և սիրենք մեր մոլորակը	3.11.23
10	Դաստիարակությունը տանը և դպրոցում	10.11.23
11	Ազնվություն և ճշմարտացիություն	17.11.23
12	Քաղաքավարություն և բարեկրթություն	24.11.23
13	Գնահատիր ժամանակը	1.12.23
14	Մաքրությունն առողջության երաշխիքն է	8.12.23
15	Եղիր հարգելից	15.12.23
16	Հագուստի կուլտուրա	22.12.23
17	Խոսքի կուլտուրա	12.01.24
18	Ճշտապահություն խոսքում և գործում	19.01.24
19	Համերաշխ դասարան	26.01.24
20	Ինքդ սովորեցիր, սովորացրու՛ ընկերոջդ	2.02.24
21	Գիրքը իմ կյանքում	9.02.24
22	Երաժշտությունը իմ կյանքում	16.02.24
23	Անվտանգ կրթության գրավականը	23.02.24
24	Հանդուրժողականություն և բարություն	1.03.24
25	Համակարգիչն՝ ընկեր թե թշնամի	7.03.24
26	Ո՛չ վտանգավոր սովորություններին	15.03.24
27	Մասնագիտությունների մոլորակ	22.03.24
28	Առողջ և անվտանգ ապրելակերպ	5.04.24
29	Անվտանգ երթևեկություն	12.04.24
30	Այսօր ինքնաքննադատության օրն է,	19.04.24
31	Լավ է երբ…, վատ է երբ…/բանավեճ/	26.04.24
32	Անձնանունների ստուգաբանություն	3. 05.24
33	Ճանաչողական Էքսկուրսիա	10.05. 24
34	Տարեվերջյան ամփոփում	17.05.24